

կառանք և անգամ վախս զգան թուրքերը, Գրքովի մէջ բերւած են երկու դէպք, որտեղ հայ պատաճիները կուռում են թուրք պատաճիների հետ քաղաքից դուրս, անվախ կերպով, իրանց թասի բի համար Առաջին լաղթութեան հետևանքն է լինում՝ հալածանքը վարժապետի կողմից, երկրորդ լաղթութեան հետևանքն է լինում՝ փախուստը հալրենի քաղաքից, ամօթաքեր հալածան-

քից ու նախատինքից աղատելու համար, Գրքովի մէջ բերւած է նաև շրիդ խաղալու մի գեղեցիկ նկարագիր:

Ամբողջը անումէ շատ լաւ տպաւորութիւն. և մենք կ'ուզէինք, որ ազդ գրքովկը ամեն ընթերցող պատանու և ուսումնարանական գրադարանի սեպհականութիւնը դառնար:

Ա.

ԳԱԲՐԻԵԼԻ ԱՆԴՐԵԱՍ, Թարգմանութեամբ Գրիգ. Շահրուդաղեանցի՝ ԲԱՀԱՅԻՈՐՈՒԹԵԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ. Թիֆլիս, տպարան Մարտիրոսեանցի, 1889 թ., միջակ քառածալ, 200 երես, տառ № 12, դիմ՝ 60 կ.:

Գիրքը գրւած է այս բնաբանի նում է, որ սա մի լուրջ աշխատանք վերակ. «Ի՞նչ է պահանջում իտալացիների մէջ բնաւորութիւն կրթելու համար—իրեն հիմունք քաղաքացիական արիաստութեան, կատարեալ ուղղամտութեան և սրանց համապատասխան գործունէութեան»:

«Որո՞նք են զեկավարող սկզբանքները և այդ նպատակին հասնելու գործնական միջոցները»:

Ravizza di Milano-ի մրցանակարաշի մասնաժողովը, որ նշանակել էր այդ թեման 1877-ին, արժանացրեց Բարի իտալական քաղաքի արհեստագիտական արքունի ճեմարանի իտալական գրականութեան պրոֆէսոր Գաբրիէլ'ի այս աշխատանութիւնը պատւալոր լիշտառակութեան միահն, գտնելով, որ գիրքը չի տալիս բնաբանի գործնական մասի լիքատար լուծումն, Բաց նա զըս-

նում է, որ սա մի լուրջ աշխատանք է և որ հեղինակը հմտութեամբ նըկարագրում է այն լատկութիւնները, որոնք անբաժան են կազմակերպւած բնաւորութիւնց»:

Գիրքը բաժանւած է երկու մասի. առաջինում հեղինակը խօսում է բնաւորութեան մասին առհասարակ, բացատրելով թէ ի՞նչ է բնաւորութիւն ասած բանը, որոնք են նորատարերը, ի՞նչ են նորա լատկանիշները. Երկրորդ մասում հեղինակը խօսում է բնաւորութեան կազմակերպւում մասին տանը, ուսումնարանումը և հասարակական ու պետական կեանքի մէջ. Առաջին մասը թէօրիհական է, երկրորդը՝ գործնական»:

Թէօրիհական մասում Գաբրիէլին առանձին ինքնուրունութիւն չի ցոց տալիս. բայց նա լաւ դասաւորել է

և լաւ ամփոփել ինչ կաէ ֆիլոսօ-
ֆալութեան և հոգեբանութեան մէջ
բնաւորութեան, կամքի ազատու-
թեան, պարտականութեան և նոցա
փոխադարձ լարաբերութիւնների մա-
սին. Միան թէ մեղ և թէկուզ ի-
տալացիներին թէ աւելի հաճելի և
թէ օգտակար կը լինէր, եթէ ընթեր-
ցողը աղդ ինդիրների վերաբերեալ
խկական գիտնական աղքիրների
հետ ևս ծանօթանար և ոչ զիխաւո-
րապէս իտալական աղքիրների հետ:
Օրինակի համար, երես 33. «Պարտա-
տրութիւնն ազատութիւն է»: Հատ-
ածի մէջ, փոխանակ Գ. Ֆիլոնգիէ-
րի՛ի, միանգամաճն պարտաւորիչ էր
կանտի և Գրօրիշի անունները տալ,
Յետու, երես 32, խօսելով ախպէս
կոչւած ուախիլ իս ար իզ մի բարովա-
խօսութեան մասին, Գաբրիէլին աղդ
համարում է կեղծ բարովականութիւն,
հակառակ վերաբարձ Փիլոսօֆալու-
թեան պատկերացումներին. իսկը սա-
է, որ աշդպէս անպապման կերպով
գիտութիւնը դեռ ևս չի հերքել
թենթամի աշխարհակեցողութիւնը,
քանի որ ցագօմ չի ապացուցած,
թէ կաէ որ և իցէ բարովական գա-
ղափար, որը չ'ընդունէր լան կեր-
պով ըմբռնած օգտակարութեան գա-
ղափարը: Երես 17. «Բարովական և
անհատական բնաւորութեան տար-
բերութիւնը» հատածին, որը լաջող-
ածններիցն է, հակասում են երես 30-
ում պատահող տողերը թէ՝ «ոչ բո-
լորեքեանքս կարող ենք ասել, թէ
բնաւորութիւն ունինք», քանի որ
առաջինում ապացուցում է, թէ ըս-
նաւորութիւն չ'ունեցող արարած
չը կաէ Նւ կետու, բնչպէս է երևա-

կալում իրան Գաբրիէլին պատաս-
խանաւուութիւնը բարովական օրի-
նաց առաջ մի մարդու կողմից, որը
բնաւորութիւն չ'ունի (համեմ. նոյն
երես 30).

Բաց այն մի քանի պակասու-
թիւնները թէօրիական մասում բո-
լորվին աննկատելի են անցնում գըր-
քից ստացած ընդհանուր տպաւորու-
թեան մօտ, որը հիանալի է: Հեղի-
նակը միշտ կարծ է խօսում, բաց
շատ զօրեղ և թարմութեան մի ա-
ռանձին հրապուղով, մանաւանդ երբ
նա բարովական լատկութիւնների
մասին է խօսում: Իւր համառօտու-
թեան մէջ ևս նա գիտէ պերճախօս
լինել, խօսքիս աղնւադրին մտքով:

Երկրորդ մասը, բացի ընդհանուր
հետաքրքրութիւնից, մի առանձին
հետաքրքրութիւն են ներկապացնուած
իտալական բարք ու վարքերը և
քաղաքակրթութեան աստիճանը ո-
րոշող տողերը, որոնք կից են զրե-
թէ ամեն մի հատածին, իտալիան և
իտալացիներին ուսումնասիրելու մի
կատարեալ ձեռնարկ է սա, գրւած
ամենազուտ հակենասիրական դի-
տումներով, մի խելացի և խոհեմ
հակենասէրի դրչով:—Հեղինակի ար-
ժանաւորութիւնների շարքում պէտք
է հաշւել այն, որ նա գիտէ հազար
անգամ արդէն խօսած և գրեթէ
մաշած թեմաների մասին խօսել,
առանց ամենափոքր անգամ տաղտ-
կութիւն պատճառելու Շնորհիւ նո-
րա, որ գրականութեան պրօֆե-
սօր է, Գաբրիէլին գիտէ իւր մտքե-
րը իտալական գրականութիւնից
վերցրած տիպերով լուսաբանել:

Ալդ գրքից է, որ իմանում ենք, թէ՝

- 1) Խտալիակում ազատութեան վերակ նախում են իրրև անհաշիւ կամագականութեան լապտնագործութեան վերակ. լեզունու գրիչը կարծես կորցրել են սաճճը. Պահպանանձ է արդեօք Խտալիակում ում և իցէ պատիւը. Բոլորովին ոտնակոխ է արւած ամենի բարի անոնը, մանաւանդ պաշտօնական շրջաններում (Եր. 46).
- 2) Խտալիակում խացրած է պարտաւորութեան զգացմոնքը. Ամենքալիափոխում սառնութիւն, անտարբերութիւն, մնուկութիւն, չութիւն (Եր. 89).
- 3) Խտալիակի գրեթէ բոլոր քաղաքական կուսակցութիւնները կըռտում են իրար հետ անազնութեամբ և առանց վեհանձնութեան (Համեմ. Եր. 67).
- 4) Անաչառ. մարդկանց մնծ պակասութիւն ենք նշմարում Խտալիակում (Եր. 61).
- 5) Խտալիակում զարգացած չէ դէպի ընտանեկան լարին ունեցած սէրը (Եր. 92).
- 6) Խտալական ընտանիքում մանկան առաջին քայլերը շրջապատած են հազարաւոր սարսափներով և զարհուրելի երազներով (Եր. 116).
- 7) Խտալիակում վարժարանը ըղբաղւած է մի՛միան խելքի կրթութեամբ, իսկ սրտին համարեա թէ ոչինչ չէ տալիս (Եր. 122).
- 8) Խտալական վարժարաններն հեղեղւած են ունակամիտ դրվովկներով, ուր ժողոված են դիտութիւնների փշանքների սակաւ մատչելի կցկոտը տեղեկութիւններ (Եր. 128).
- 9) Բազմամեակ դիտողութիւնն ու փորձը համոզում է մեզ, որ խտալիական վարժարանում շատ խելք ու դիտութիւն կաէ, բաց քիչ առաքինութիւն և սիրտ (Եր. 131).
- 10) Ավժմ Խտալիակում վարժարանը կարծես մի տեսակ անկելանոց է դառել, որ ապաստան է տալիս ամեն մի ապիկար ուսուցչի. ով ոչ մի բանի պիտանի չէ, նա վարժապետ է դառնում. թէս այս կարծիքը կարող է ծանր կշտամբանք համարմայլ, բաց մասամբ էլ իրաւ է (Եր. 135).
- 11) Մեզանում (Խտալիակում) առանց երկար ու բարակ մտածելու, ամեն մի բանի մէջ մեղադրում են ուսուցիչներին (Եր. 139).
- 12) Խտալիակում մարմնամարզութիւնը չի հասել այն զարգացմանը, որպիսին վակել է աղաս պետութիւններին (Եր. 159), մինչդեռ «անգլիական և գերմանական դպրոցներում մարմնամարզութիւնը վակելուչ տեղն ունի բռնած» (Եր. 160).
- 13) Մարմնամարզութեան ուսուցիչները Խտալիակում լարգանք չեն վակելում (Եր. 160).
- 14) Խտալիակում պարապ մարդիկ կազմում են 36.4% (Երեխ չափահաս ազգաբնակութեան). մինչդեռ Եւրոպակում ոչ մի ազգ չ'ունի ամելի քան 7.7% անգործ մարդիկ (Եր. 185).
- Հեղինակը, սական, գտնում է բնաւորութեան մի քանի արժանաւոր գծեր Խտալացիների մէջ. Ակնպիսի մարդկանց օրինակներով որոնք գերազանել են ազնիւ. աղքատութիւնը անազնիւ հարստութիւնից, լիքն է Խտալիակի հին, միջին, նոր

և ժամանակակից շրջանների պատմութիւնը (եր. 68):

Խօսելով քաղաքացիական արիութեան մասին, հեղինակը վերջացնում է. «Հաւրենիքի մարտիրոսների թիւը ազնքան մեծ է Խոտալիալում, որի հաւասարը հազիւ թէ ուրիշ որ և է երկրում գտնւէր թէն երկար է Խոտալիակի ստրկութեան պատմութիւնը, բայց և անպէս կարծ էլ չէ և աղնիւ ու մեծ հանճարների ազնիւ պատերազմի պատմութիւնը ազդեցիկ անձնիրի և խաժամուժի բռնութեան դէմ (եր. 16):

...Հաստատ դասողութեան վերակիմնելով, աեսնում ենք, որ չափաւորութիւնը խոտալացու բնութեանն լառուկ է... Եւ աչքերիս առաջ բացում է ոչ հեռաւոր ապագան, երբ Խոտալիան կը մարմնացնէ չափաւորութիւնը ամենաանարատ ձեռք. (եր. 53):

Ոգեսրութեամբ է գրւած «Վաստակութիւն առ իւր անձը» (183—186) հատւածը. բայց երես 184 ապացուցում է, որ հասարակական գիտութիւնների ուսումնասիրութեան մէջ հեղինակը հեռու չի գնացել:

Հաստ հետաքրքրական է արհետագիտական (տեխնիքական) կը թութեան նւիրած հատւածը (141—155). Հեղինակը եռանդագին պաշտպան է արհետագիտական կրթութեան, որի մասին նա ասում է երես 148-ում, թէ պատմութիւնը ապացուցանում է, որ արհետագիտական կրթութիւնը ժողովրդի ազատութեան նշան է. Բայց ոչնչով չի առաջացնում դասական (կլասիքական) և արհետագիտական կրթու-

թեան խնդրի լուծումը. խնդրի, որի էութիւնը Գաբրիէլին չի ըմբռնել, չը նադած որ դորա մասին ոչ միայն մեծ գրականութիւն կար, ալ և մի քանի մասնաւոր գպրոցներում ընդունած ծրագրիները աշխատում են խնդրիրը գործնականապէս լուծելու. օրինակ, ան դպրոցներում, որտեղ լուսաբէնը և լատիներէնը սկսում են դաս տալ միակն բարձր դասասներում:

Մասնաւորապէս Խոտալիակի մասին հեղինակից իմանում ենք ալս, որ մինչ մօտ 1860 թւականը արհետագիտական կրթութեան մասին Խոտալում խօսք անդամ չը կար, մինչեւու քսան տարւակ ընթացքում չը մնաց թերակղզում և հարան կղզիներում (Սիցիլիա, Սարցինիա) տեղ, ուր չը հաստատէր որ և է արհետագիտական մասնագիտական դպրոց, կամ վաճառականութեան, կամ երկրագործութեան, կամ արհետաների, կամ արհետաների համար, հանդէս եկան արհետագիտական, անտառապահական, ծովալին, լեռնավին և ազ սրանց նման ճեմարաններ» (եր. 153). Ազդ գործին օգնել են և տէրութիւնը և գաւառական ու համանական լիքնավարութիւնները և թէ մասնաւոր ընկերութիւնները, նաև բարեգործական ընկերութիւնները (համեմ. նոյն երես):

Թարգմանութիւնը ընդհանրապէս տանելի. է զարգացածը համար. Բայց որովհետև պ. Շահբուղաղեանցը նորեկ չէ թարգմանչական ասպարիզի վերակ, աչդ պատճառով մնաք նրան լանդիմանում ենք լեզուի մի քանի սխալների և վատ սովորութիւն-

Ների համար, Փոխանակ ասելու՝ մրցել ամենազօրեղագուն զօրաց հետ, (Ներածութիւն, երես Դ.), պէտք է ասել՝ մրցել ամենազօրեղ զօրքերի հետ, Պէտք է համաձայնէք, որ զօրեղ—զօրեղագոյն կամ ամելի զօրեղ—ամենազօրեղ. երես 28՝ ամենավսնմագուն, երես 179՝ ամենալաւագոյն—նոյն սխալներն են.

Զի կարելի ասել՝ ամենքը իրօք չեն օգտում ալս ընդունակութեամբ, (եր. 17), ալ պէտք է ասել... ալս ընդունակութիւնից, ապա թէ ոչ ընդունակութեամբ ալդ դէպօւմ նշանակում է՝ ընդունակ մարդու նման, Ագն, կարելի է և պէտք է ասել՝ ալս ընդունակութեամբ ես օգտուցի ալս ինչ բանից. բաց դա արդէն ուրիշ միոք է լատնում: Յետով, երես 96՝ ալս բացատրութեամբ մենք կարող ենք շարունակել, փոխանակ ասելու՝ ալս բացատրութիւնից լետուք... Նկատենք, որ գործիականի համար աւ վերջատրութիւնը ժամանակ է արդէն արխիւր գցել՝ ուրինն, ոչ ալդ պատճառաւ աւ (եր. 26 և ական), ալ՝ ալդ պատճառ ով:

Սխալ է ալս ոմը՝ բնաւորութիւնը զարգանում է պարտաւորութեան կատարելով (եր. 30), պէտք է ասել՝ պարտաւորութիւնը կատարելով:

Անհիմն է ասել՝ պարտաւորութեանց (եր. 50), քանի որ երես 31-ում ասում էք պարտաւորութիւնն եր. վատ է և սխալ ասել՝ կատարուեցաւ (եր. 40), պէտք է ասել՝ կատարւեց. վատ ոճ է դարձածն՝ քաջալերութիւն ստանալով նոյն

իսկ հակառակորդիցն անդամ (եր. 40). Նօտրաշար խօսքերից մէկն ու մէկը աւելորդ է:

Վատ սովորութիւն է ասելը՝ ուրըն որ, բաւական է ասել՝ որ կամ որը:

Խտալացի մեծ քաղաքագէտի անունը կատուր (եր. 54) չէ, ալ կատուր է:

«Ո գործ հրաւիրել»-ը (եր. 54) հրըն է, քանի որ մենք աշխարհաբար ասում ենք՝ գործի հրաւիրել, գործի կանչել.

Սխալ ոճ է ասելը՝ դրական մարդը... մի անդամ արօրը լծւելով, արդէն ալ ևս չի շուռ գալ, մինչ և վերջը չի հասցնի իւր խուրձը (եր. 54—55). մինչդեռ հեղինակը ուզում է ասել թէ դրական մարդը ևս չի շուռ գալ, մինչ և որ իւր խուրձը ծագը չը հասցնի, Բաց ի դէպ. ալդ որ մարդն է արօրին լծւում և որ արօրըն է խուրձով բնունած:

Նկատենք, որ երես 159, «ՀՇ օլմավիական»—1000-ից մի ընթերցող չի հասկանալ, թէ ալդ որերորդ օլմավիականն է երես 187 և ալն, գործ է ածւում պնկերական խնդիրովարձւածը, մինչդեռ սօցիալական խնդրի համար ընդհանրագէս ընդունւած է ասել՝ «ընկերվարական խնդիր»:

Գրքի մէջ ամենուրեք գործ է ածւած «ալբախս ասել», փոխանակ ասելու՝ «ապախս ասած», որ արդէն ընդունւած ոճ է:

Պատահում են գլքում լիզուի նաև կարևորագոյն սխաներ, որոնցից ամենակարևորը և ամենաաննե-

բելին տպւած է երես 106-ում, իբրև թէ հեղինակը ասած վիճ՝ «կրօնական անխարժութիւնը բնաւորութեան ովֆի կերպարանք ունի, բաց իրօք որքան որ նա փոքրոգութեան նշան է, նոյնքան և սնափառութեան»։ Աստուծուց վախեցէք, պ. Շահը բաղադրական ինչպէս թէ կրօնական անխարժութիւնը փոքրոգութեան և սնափառութեան նշան է։ Գրքի բնագիրը մննք չ'ունինք մեր ձեռքում, բաց մենք այնքան ընտանի ենք զգում մեզ պ. Գարբրիէլի հակեցողութեան աշխարհում, որ գիտենք, թէ ինչ պէտք է ասում մինի հեղինակը. նա երեխ խօսում է այն մարդկանց մասին, որոնց համար իրանց պաշտօնապէս դաւանած կրօնը նշանակութիւն չ'ունի, նրանց համար, որոնք նշանակութիւն չեն տալիս կրօնին և արհամարհում են կրօնը առհասարակ։ Դոքա ան-

տարբեր են. դէպի կրօնը, իսկ այդ վերաբերմունքը կոչում է անտարբերութիւն և ոչ թէ անխարժութիւն, որի լմասուը հալոց լեզուում պ. թարգմանչին շատ և շատ լաւ լաւանի պէտք է լինի.

Ամփոփենք ուրեմն մեր ասածները. Պ. Գարբրիէլի գիրքը մի դաստիարակչական գիրք է, որը ունի թերի կողմեր, բաց որը, իւր ընդհանրութեամբ, գործում է ամենալաւ տպաւորութիւնն Արժէ, որ նա մեզանում տարածվի և կարդացվի թէ բարձր դասատների աշակերտներից և թէ ընթերցանութեան և մտածողութեան սովոր ամեն կարգի անձերից. Թարգմանութիւնը ընդհանրապէս տանելի է, բաց ապագալում պ. թարգմանչին կը հարկաւորւի աւելի լաւ իւրացնել արդի լեզուի ոգին,

Ա.

Dr. Johannes Barchudarian, Inwiefern ist Leibniz in der Psychologie ein Vorgänger Herbarts. Ein Beitrag zur Geschichte der Psychologie. Iena, Frommansche Buchdruckerei (Herrmann Pohle), 1889 թ. (Դօքտօր Յովհաննէս Բարխուդարեան. Ինչ չափով Լայբնիցը Հոգեբանութեան մէջ Հերբարտի նախորդն է։ Մի նպաստ հոգեբանութեան պատմութեան. Ենսա, 1889 թ.):

Աս դիսերտացիան, որ 51 երեսից բաղկացած մի բրոշյւր է, համատարակեց նորերում իրեն գերմանական Ենա-համալսարանի դօքտորական քննութեան արդիւնք։

Նախ քան նորա բովանդակութեան մասին համառօտ տեղեկութիւն տալս, ես կը ցանկավի ի դէպւ

լատինել իմ տեսակէտն ալսպիսի աշխատութիւնների մասին։ Որովհետեւ մննք համալսարանական և այլ բարձր գիտական հիմնարկութիւններ չ'ունինք, ուր հնարաւոր լինէր հալենիքի կեանքն ուսումնասիրել, ուստի և շատ կարևոր էր, որ այն ուսանողները, որոնց վիճակւում է արտասահ-